Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(1 հունվարի 1999 թ.)

«Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն»:

(ՂՈՒԿԱՍ ԺԲ 32)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Նոր տարվա շեմին, երբ կխորհրդածեի այսօրվա քարոզի մասին, իմ մտքում հայտնվեց Ավետարանի այս խոսքը. «Մի՛ վախենար, հոտ փոքրիկ՝ փոքրիկ ժողովուրդ, որովհետև երկնավոր Հայրը հաճեցավ ձեզ տալ Իր արքայությունը»:

Աշխարհի վրա չկա ավելի թանկ բան, քան աստվածային արքայության արժանանալը, հատկապես փոքր ժողովուրդների համար, որոնք միշտ տարաբախտ, միշտ անարդարության ենթարկված, հալածված, սովի մատնված, աքսորված և զանազան բռնությունների ենթարկված մարդիկ են եղել: Մի քանի տասնյակ տարիներ առաջ աքսորն էր բռնանում մեզ, Հայաստան աշխարհը տակավին չուներ իր ազատությունը, և հայերը հալածական մի ժողովուրդ էին դարձել: Այդ հալածանքը մեծապես ազդել է մեր ժողովրդի բարոյահոգեբանական վիճակի վրա: Հայերը միայն, Քրիստոսից առաջ, առաջին դարում են ունեցել աշխարհակալ մի թագավոր՝ Տիգրան Մեծը, սակայն հետագայում մենք միշտ, իբրև փոքրիկ ժողովուրդ, հալածական ենք մնացել արևելքի և արևմուտքի միջև, հռոմեական, ապա բյուզանդական կայսրությունից մինչև պարսկական տիրապետություն: Երկու հսկա ուժերի միջև միշտ եղել ենք տառապող ժողովուրդ:

Երբ իսլամը յոթերորդ դարում աշխարհ եկավ, Հայաստանը ենթարկվեց արաբական արշավանքի: Հայ ժողովուրդը շուրջ երեք հարյուր տարի մնաց բռնության ներքո: Բագրատունյաց իշխանության օրերին Կենտրոնական Ասիայից նորից մոնղոլ-սելջուկյան հորդաները եկան՝ Հայաստանը բռնատիրելու և հայ ժողովրդին զրկելու ազատությունից: 11-րդ դարում կորցրեցինք Անիի թագավորությունը, մայրաքաղաքն ընկավ, և հայ իշխանավորները ճանապարհ բռնեցին դեպի արևմուտք և հիմնեցին Կիլիկիո Ռուբինյան իշխանությունը, որը տևեց մինչև 1375 թվականը: Ապա նորից մնացինք իբրև հալածական՝ մերթ իրանյան, մերթ օսմանյան իշխանության ներքո:

600 տարիների ընթացքում հայ ժողովուրդը միշտ էլ իր հոգում սնուցել է ազատության և անկախության երազը: Արշակունյաց իշխանության կորստից հետո, Սահակ Պարթև Հայրապետից մինչև Հակոբ Ջուղայեցի, Ներսես Աշտարակեցի և մյուս բոլոր կաթողիկոսները, մինչև Գարեգին Առաջին, միշտ մտածել և մտահոգվել են հայ ժողովրդի ազատության, անկախության և ինքնաճանաչողության հարցերով: Հատկապես Ներսես Աշտարակեցի Կաթողիկոսը մեծ աշխատանք տարավ, որպեսզի հնարավոր լիներ Հայաստանի անկախացումը:

1915-18 թթ. դարի մեծագույն հալածանքն ու ցեղասպանությունը տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանում, ուր մեկուկես միլիոն հայեր զոհվեցին և աքսորվեցին, իրենց արյունը հեղեցին վասն արդարության և վասն ազատության: 1918 թվականին օսմանցիներն այս անգամ զենքերն ուղղեցին դեպի Արևելյան Հայաստան՝ հայոց մնացորդացը ևս ջարդելու, սակայն հանդիպեցին հայի ազատ կամքին: Մեր հայրերը Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում կարողացան իրենց արյան գնով, իրենց միասնականությամբ, իրենց հայրենասիրությամբ ընդդիմանալ և թուրքական հորդաներին ետ շպրտել հայկական սահմաններից:

Հայ ժողովուրդը որոշ ժամանակ ազատություն ստացավ: Այդ տարիներին Հայաստանը շենացավ ու վերակառուցվեց, հնարավորություն ունեցավ ինքն իրեն վերագտնելու, փյունիկի նման մոխիրներից վերակենդանանալու, վերընծյուղվելու, և ութ տարիներ առաջ հնարավորություն ստացավ անկախանալու, ազատ ու անկախ հանրապետություն կոչվեց:

Այսօր, երբ մայրաքաղաքի Հանրապետության հրապարակի կառավարական շենքի վրա Հայաստանի դրոշն է փողփողում, հպարտությամբ են լցվում մեր սրտերը, մանավանդ նոր տարվա այս առավոտյան՝ հիշեցնելով մեզ, թե որքա՞ն-որքան զոհողությունների գնով հնարավորություն ունեցանք ազատություն ու անկախություն ունենալ: Կարդացեք, սիրելինե՛ր, Խաչատուր Աբովյանի, Խրիմյան Հայրիկի, Նալբանդյանի և այլոց գործերը՝ տեսնելու համար, թե ինչպիսի ներքին մղում, սեր ունեին նրանք Հայաստանի անկախացման համար: Այսօր նրանց երազանքն իրականություն է, և փառք ենք տալիս Աստծուն, որ առանց արյան մեծ հեղման այս ազատությունը և անկախությունը մեզ պարգևվեց: Հայաստանը Հայրենիքն է ողջ հայության «ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի և յԱրցախ»: Այս գիտակցությամբ պետք է մոտենանք մեր այսօրվա իրականությանը: Յուրաքանչյուրս, թե Հայաստանում, թե Սփյուռքում, մեր մասնակցությունը պետք է բերենք Հայաստանի անկախության կերտմանը:

Հայաստանի համար իրենց զոհողությունն են կատարել մեր եկեղեցու բոլոր Եռամեծ հայրերը: Այսօր մենք ուրախ ենք՝ տեսնելով Հայաստանի անկախությունն ու ազատությունը, թեև նա տակավին կարիքն ունի տնտեսական բարվոքման: Այսօր նոր տարվա առաջին օրն է, ուրախությամբ են լցված մեր սրտերը, մեր մտքերը սլանում են դեպի հեռուները, դեպի մեր հայրապետների կատարած զոհողությունները, որոնք Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի ստեղծած գրերով մեր երկիրը և մեր ժողովրդին ազատեցին օտար ազդեցություններից: Այսօր, կանգնած այս Սուրբ Խորանին, գոհունակությամբ Աստծուն փառք տալով, բոլորիդ ասում եմ՝ շնորհավոր Նոր տարի, թող Աստված անսասան պահի 1700-ամյա Հայաստանյայց եկեղեցին և Հայոց Հայրապետին հնարավորություն տա՝ գոհունակությամբ տոնախմբելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հաստատման 1700-ամյակը: Մեր սրտագին մաղթանքն է, որ Աստված առողջություն, երկար տարիների կյանք պարգևի Հայոց Հայրապետին: Մաղթում եմ մեր բոլոր հոգևոր եղբայրներին և, սիրելի ժողովուրդ, ձեզ, ձեր հավատքի մեջ ամուր մնացեք: Թող նոր տարվա այս առաջին օրը աստվածային շնորհը լցնի մեր հոգիները երջանկությամբ, և թող 1999 թվականը բախտավոր տարի լինի, վերաշինության տարի լինի, որպեսզի կարողանանք փառքով ու պատվով տոնախմբել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հիմնադրման 1700-ամյակը այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն: